

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
1999թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

**Ներածություն**

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովն էներգետիկայի բնագավառում կարգավորող մարմին է, որը գործում է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի, այլ նորմատիվ իրավական ակտերի հիման վրա եւ ինքնուրույն է իր իրավասության շրջանակներում:

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը եւ 3 անդամները նշանակվել են Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրերով:

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովն ունի հետտեյալ կազմը.

<b>Վարդան Մովսեսյան</b>	նախագահ
<b>Նիկոլայ Գրիգորյան</b>	նախագահի տեղակալ
<b>Աշոտ Հովսեփյան</b>	հանձնաժողովի անդամ
<b>Էմիլ Աճեմյան</b>	հանձնաժողովի անդամ
<b>Շիրազ Կիրակոսյան</b>	հանձնաժողովի անդամ

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի հիմնական խնդիրները եւ իրավասությունները ամրագրված են «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում:

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է աշխատակազմի միջոցով (45 մարդ), որն ունի հետտեյալ կառուցվածքային ստորաբաժանումները.

- սակագնային քաղաքականության վարչություն

- ֆինանսատնտեսական վերլուծության վարչություն
- իրավաբանական - լիցենզիոն վարչություն
- գործերի կառավարչություն
- քարտուղարություն:

### 1. Էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովը էներգահամակարգի տնտեսավարող սուբյեկտներից ստացել է 1999 թվականի ֆինանսատնտեսական գործունեության միջանկյալ՝ ինն ամսվա հաշվետվություններն ու տեղեկատվությունները, որոնց հիման վրա կատարվել են ֆինանսատնտեսական վերլուծություններ, կազմվել համապատասխան եզրակացություններ եւ ուղարկվել բոլոր տնտեսավարող սուբյեկտներին՝ քննարկելու եւ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու համար:

Հանձնաժողովի կողմից մշակվել եւ անկախ փորձագետների ու տնտեսավարող սուբյեկտների համապատասխան մասնագետների հետ քննարկելուց հետո ներդրվել են հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների եւ ֆինանսատնտեսական տեղեկատվությունների նոր ձեւեր, որոնք հիմնված են վերլուծական (ենթահաշիվների) համակարգի վրա եւ որոնցում հաշվի են առնվել հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջները :

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը մի շարք կազմակերպչական աշխատանքներ է կատարել ֆինանսական հաշվետվությունների ներկայացման եւ վերլուծական աշխատանքների կանոնակարգման ուղղությամբ: Մասնավորապես, մշակվել եւ շրջանառության մեջ են դրվել էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների կողմից ՀՀ էներգետիկայի հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների, ֆինանսատնտեսական տեղեկատվությունների ընդունման, քննարկման ու

վերլուծության կազմակերպման, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքների քննարկման կարգերը:

Ներկայումս ընթացքի մեջ են 1999 թվականի տարեկան արդյունքներով հաշվետվությունների ընդունման եւ վերլուծության աշխատանքները, որոնց ավարտից հետո հանձնաժողովը նախատեսում է համապատասխան գնահատականներով եւ ընդհանրացված տվյալներով տեղեկատվություն հրապարակել զանգվածային լրատվամիջոցներով:

Մշակվել եւ անկախ փորձագետների ու տնտեսավարող սուբյեկտների քննարկմանն են ուղարկվել՝

– Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխան, էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացվող հաշվապահական հաշվետվությունների կազմման կարգը, որը կնպաստի սակագների հաշվարկման նոր մեթոդների կիրառմանն ու երկդրույթ սակագնային համակարգի ներդրման հիմքերի ստեղծմանը:

– Էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների գնահատման ցուցանիշների համակարգի նախագիծը:

Նշված ձեռնարկումների նպատակը առավել հիմնավորված սակագնային քաղաքականության իրականացումն է եւ գործունեության լիցենզիաներով տնտեսավարող սուբյեկտներին առաջադրվող պայմանների վերահսկումը:

## 2. Սակագների վերանայում (սահմանում)

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովը 1999 թվականի ընթացքում լայն գործունեություն է ծավալել սակագների հաշվարկման մեթոդաբանության եւ մեթոդիկայի լրամշակման, կատարելագործման՝ միջազգային չափանիշներին համապատասխանեցման, ներդրման, ինչպես նաև սակագների հաշվարկի հիմքում ընկած ելակետային

տվյալների գնահատման ու հստակեցման ուղղությամբ: Մշակվել են ամորտիզացիոն մասհանումների չափերի սահմանման սկզբունքները՝ հաշվի առնելով ոլորտի հիմնական միջոցների վերագնահատման գործընթացը, բնագավառում զգալի ներդրումների կատարման անհրաժեշտությունը եւ ներդրված կապիտալի հատուցման չափի որոշման սկզբունքները:

Կատարվել են հանձնաժողովի համապատասխան որոշմամբ հաստատված ձեւերով բնագավառի տնտեսավարող սուբյեկտներից ստացված տեխնիկատնտեսական հաշվետվությունների տեխնիկական փորձաքննություններ, կազմակերպվել եւ անցկացվել են քննարկումներ: Ընդունվել եւ տեխնիկական փորձաքննության են ենթարկվել սակագների վերանայման վերաբերյալ էլեկտրաէներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների կողմից համապատասխան հիմնավորումներով ներկայացված առաջարկությունները (հայտերը):

Էլեկտրաէներգիա արտադրող կայանների բեռի գրաֆիկի հարթեցման եւ դրանով իսկ հզորությունների օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը ճշգրտել է կայանների 1999 թվականի էլեկտրաէներգիայի առաքման (արտադրության) քվոտաները եւ բոլոր կարգի սպառողների համար սահմանել գիշերային սակագներ: Գիշերային սակագների ներդրման նպատակն է խթանել երկրի տնտեսության եւ, առաջին հերթին, փոքր ու միջին ձեռներեցության զարգացումը, ինչպես նաեւ որոշ չափով մեղմացնել բնակչության սոցիալական խնդիրները: Միաժամանակ, գիշերային զեղչ սակագների ներդրման համար պահանջվող տեխնիկական լուծումները, մասնավորապես, նոր հաշվիչների տեղադրումը, էապես կնպաստեն համակարգի արդյունավետության բարձրացմանը, այդ թվում՝ գերկորուստների էական նվազեցմանը:

Աշխատանքներ են տարվել երկդրույք սակագնային համակարգի (վճարներ՝ հայտավորված հզորության եւ օգտագործված էլեկտրաէներգիայի քանակի համար) ներդրման ուղղությամբ: Մշակման փուլում է երկդրույք

սակագնային համակարգի մեթոդական բազան, որը նախատեսվում է ներդնել ըստ տեխնիկական պատրաստվածության եւ որի ներդրումը թույլ կտա մեծածախ շուկայում ստեղծել էլեկտրական էներգիա առաքողների մրցակցություն, տնտեսապես խթանել խոշոր սպառողների կողմից էներգիայի եւ հզորության արդյունավետ օգտագործումը, ինչպես նաեւ սպառողների մոտ էներգախնայողական տեխնոլոգիաների ներդրումը:

Մշակվել է ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի գործունեության ծրագիրը: Կատարվել են էլեկտրական ու ջերմային էներգիայի եւ բնական գազի 2000 թվականի հաշվեկշիռների եւ էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքի կանխատեսումները:

Հաշվի առնելով 2000 թվականին էլեկտրական էներգիայի կանխատեսվող սպառման եւ էներգետիկական պաշարների ծավալները, սահմանվել են ազգային ցանց էլեկտրաէներգիայի առաքման 2000 թվականի քվոտաները:

Էներգետիկ համակարգի առաջիկա հնարավոր զարգացման միտումների և այլ գործոնների գնահատման հիման վրա կանխատեսվել է մոտակա 10 տարիներին էլեկտրաէներգիայի սակագների հնարավոր դինամիկան:

Անփոփոխ թողնելով սպառողներին առաքվող էլեկտրաէներգիայի սակագները, սահմանվել են արտադրող կայաններից առաքվող, հաղորդման ծառայության եւ բաշխիչ ձեռնարկություններին «Հայէներգո» ՊՓԲԸ -ի կողմից վաճառվող էլեկտրաէներգիայի նոր սակագներ, որոնք գործողության մեջ են դրվել 2000 թվականի փետրվարի 1-ից:

Մշակվել եւ ներդրվել է փոքր ՀԷԿ -երից առաքվող էլեկտրաէներգիայի սակագների հաշվարկի նոր մեթոդաբանությունը, սահմանվել են փոքր ՀԷԿ -երից առաքվող էլեկտրաէներգիայի նոր սակագներ:

Անփոփոխ են մնացել նաեւ բնակչությանը եւ այլ սպառողներին մատակարարվող բնական գազի սակագները, նպատակ ունենալով, առաջին հերթին, կանխել ջերմաէլեկտրակայաններում արտադրվող էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացումը: Սակայն, հաշվի առնելով բնական գազի ոլորտում

իրականացված կառուցվածքային փոփոխությունները, ինչպես նաև ուսումնասիրելով բնական գազի վաճառքի եւ մատուցվող ծառայությունների սակագների վերաբերյալ բնական գազի ոլորտում լիցենզավորված գործունեություն իրականացնող ընկերությունների ներկայացրած հայտերը, հանձնաժողովը սահմանել է բնական գազի փոխադրման եւ բաշխման ծառայությունների նոր սակագներ:

Ջերմամատակարարում իրականացնող ընկերությունների հայտերի հիման վրա սահմանվել են 1999-2000 թթ. ձմռան ժամանակաշրջանի կենտրոնացված ջեռուցման նոր սակագներ՝ ըստ բնակավայրերի:

### 3. Էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների փոխհարաբերությունների կարգավորում

Էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների փոխհարաբերությունների կարգավորման, նրանց միջեւ առաջացած վեճերի լուծման նպատակով, ինչպես նաև հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» ենթակետը, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովը մշակել եւ հաստատել է հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջեւ առաջացած տարաձայնությունների վերաբերյալ դիմումների ընդունման, քննարկման եւ լուծման կարգը:

Հաշվի առնելով էներգետիկայի համակարգի ներկա կառուցվածքը, «Հայէներգո» ՊՓԲԸ-ի միայնակ գնորդ-վաճառողի կարգավիճակը, հանձնաժողովը մշակել եւ հաստատել է տնտեսավարող սուբյեկտների առեւտրային փոխհարաբերությունները կանոնակարգող՝ էլեկտրական էներգիայի առուվաճառքի (արտադրող - մեծածախ գնորդ - վաճառող, մեծածախ գնորդ - վաճառող - բաշխող, հաղորդման ծառայություն) պայմանագրերի օրինակելի ձեւերը, որոնք հնարավորություն են ընձեռում հավասարակշռել կողմերի իրավունքներն ու պատասխանատվությունը:

Հաստատվել են նաեւ բնական գազի ոլորտի (բնական գազի փոխադրում, բաշխում, առուվաճառք) պայմանագրերի օրինակելի ձեւերը, որոնցում հաշվի են առնվել բնական գազի բնագավառում կատարված կառուցվածքային փոփոխությունները:

#### 4. Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորում

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովը մշակել է հաստատել է էներգետիկայի բնագավառում էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման եւ արտահանման գործունեության, հանրապետության տարածքում փոքր ՀԷԿ-երի կառուցման լիցենզիաների օրինակելի ձեւերը, լիցենզիայով սահմանվող գործունեություն իրականացնելու հիմնական պայմանները, ինչպես նաեւ էներգետիկայի բնագավառում էլեկտրական էներգիայի եւ բնական գազի ներկրման ու արտահանման գործունեության լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքների ներկայացման կարգը, որով սահմանվել են ներկայացվող փաստաթղթերի ձեւերը եւ դրանց առաջադրվող պահանջները:

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 15-րդ, 20-րդ եւ 36-րդ հոդվածները, գործող ընկերությունների լիցենզավորման ժամկետի սահմանափակման վերաբերյալ 48-րդ հոդվածը, ինչպես նաեւ ելնելով սպառողներին հուսալի եւ անվտանգ էներգիայի մատակարարման ապահովման անհրաժեշտությունից, 1999 թվականի ընթացքում էներգետիկայի հանձնաժողովի որոշմամբ գործունեության լիցենզիաներ են տրամադրվել էներգետիկայի բնագավառում հետեւյալ ուղղություններով գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին.

դ	Գործունեության անվանումը	Տրված լիցենզիաների քանակը
1	Էլեկտրական էներգիայի արտադրություն	20
2	Էլեկտրական էներգիայի տեղափոխում	1
3	Էլեկտրական էներգիայի բաշխում	4
4	Ջերմային էներգիայի արտադրություն	2
5	Ջերմային էներգիայի տեղափոխում	2

6	Ջերմային էներգիայի բաշխում	2
7	Բնական գազի ներկրում	2
8	Բնական գազի փոխադրում	2
9	Բնական գազի բաշխում	2
10	Կենտրոնական կարգավարական ծառայություն	1
11	Փոքր ՀԷԿ-ի շինարարություն	2
12	<b>Ընդամենը</b>	<b>40</b>

### 5. Համագործակցությունը պետական մարմինների հետ

Համագործակցելով պետական կառավարման մարմինների հետ, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովը 1999 թվականի ընթացքում քննարկել է և դիտողություններ ու առաջարկություններ է ներկայացրել նրանց կողմից նախապատրաստված ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության որոշումների և այլ նորմատիվ ակտերի նախագծերի վերաբերյալ:

Ելնելով տնտեսավարող սուբյեկտների և սպառողների բողոքների ու հարցադրումների քննարկման արդյունքներից, հանձնաժողովը առաջարկություններ է ներկայացրել նաև ՀՀ կառավարության որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Մասնավորապես, հանձնաժողովի առաջարկությամբ չեղյալ է համարվել ՀՀ կառավարության «Էլեկտրական ու ջերմային էներգիայի և գազի օգտագործման խախտումների համար պատասխանատվության ուժեղացման մասին» 1993 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 583 որոշումը, որը թեև ընդունվել էր էներգետիկ ճգնաժամի պայմաններում և հակասում էր գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, սակայն շարունակում էր գործել, համաձայն որի տնտեսավարող սուբյեկտները էլեկտրական ու ջերմային էներգիայի և բնական գազի օգտագործման խախտումների համար տուգանվում էին նվազագույն աշխատավարձի մինչև 200-ապատիկի չափով:



Հաշվի առնելով ջերմաէներգետիկայի ոլորտում ստեղծված իրավիճակը եւ դրա հետ կապված խնդիրները, հանձնաժողովը մշակել է ՀՀ կառավարության քննարկման է ներկայացրել «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով առաջարկում է հետաձգել ջերմաէներգետիկական ոլորտի տնտեսավարող սուբյեկտների լիցենզավորման ժամկետները: Նշված նախագիծն արժանացել է ՀՀ կառավարության հավանությանը եւ ներկայացվել ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը:

Հանձնաժողովն ակտիվորեն մասնակցել է էներգետիկայի բնագավառի պետական սեփականություն հանդիսացող ընկերությունների կառավարման բարելավմանն ուղղված ՀՀ կառավարության աշխատանքներին եւ իր մոտեցումներն ու առաջարկությունները ներկայացրել ՀՀ կառավարության քննարկմանը: Նշված փաստաթղթերում արժարժվել են հրատապ լուծում պահանջող խնդիրները եւ առաջարկվել լուծման ուղիները: Ներկայումս ՀՀ կառավարությունում քննարկվում են այդ առաջարկությունները:

Հանձնաժողովը 1999 թվականի ընթացքում հրավիրել է հանձնաժողովի 51 նիստ, կայացրել 43 որոշում:

Դեկավարվելով «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի պահանջներով, հանձնաժողովի նորմատիվ բնույթի բոլոր որոշումները հրապարակվել են Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում:

Հաշվի առնելով էներգետիկայի բնագավառի զարգացման դինամիկան եւ իր աշխատանքային փորձը, հանձնաժողովը մշակել է շրջանառության մեջ է դրել «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի նոր նախագիծ, որում հաշվի են առնվել այնպիսի կարելորագույն խնդիրներ, ինչպիսիք են էներգետիկական շուկայի ձեւավորումը եւ հետագա զարգացումը, կարգավորման ինստիտուտի հետագա կատարելագործումը եւ զարգացումը, հստակեցվել են տնտեսավարող սուբյեկտների եւ կարգավորող մարմնի իրավունքներն ու

պարտականությունները եւ այլն: Նախագծում հաշվի են առնվել նաեւ կարգավորող մարմիններ ունեցող երկրների մեծ փորձը եւ միջազգայնորեն ընդունված կարգավորման սկզբունքները:

Հանձնաժողովը մասնակցել է պետական մարմինների ու հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպված եւ իր գործունեության ոլորտին առնչվող քննարկումներին, խորհրդակցություններին ու սեմինարներին:

## 6. Սպառողների հետ տարվող աշխատանքներ

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովն իր գործունեության շրջանակներում հատուկ նշանակություն է տալիս սպառողների հարցադրումների, դիմում-բողոքների, առաջարկությունների հետ տարվող աշխատանքներին, որոնք կանոնակարգված են հանձնաժողովին ուղղված սպառողների հարցադրումների եւ բողոքների ընդունման, քննարկման եւ որոշում կայացնելու վերաբերյալ կարգով:

Սպառողների հարցադրումներին եւ դիմում-բողոքներին հնարավորինս սեղմ ժամկետում օբյեկտիվ եւ սպառիչ պատասխան տալու նպատակով հանձնաժողովը կազմակերպել է լսումներ, քննարկումներ՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, համագործակցել է բաշխող ընկերությունների եւ համապատասխան նախարարությունների ու գերատեսչությունների հետ:

1999 թվականի ստացված 119 դիմում-բողոքներին եւ հարցադրումներին (74-ը՝ բնակչությունից, 45-ը՝ կազմակերպություններից) տրվել են օպերատիվ պարզաբանումներ եւ համապատասխան լուծումներ: Բողոքների եւ հարցադրումների գերակշիռ մասը վերաբերել է էլեկտրաէներգիայի սակագների ոչ ճիշտ կիրառմանը, հաշվիչների սխալ ցուցմունքների առնչությամբ առաջացած տարաձայնություններին (50), էլեկտրաէներգիայի առուվաճառքի պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ

պատշաճ կատարմանը (30), հաշվառքի սարքերի տեսանելիության բացակայությանը (24) եւ ենթաբաժանորդի կարգավիճակի հստակեցմանը (15):

Հանձնաժողովում գործում է հրատապ հեռախոս, որի միջոցով օպերատիվ պարզաբանումներ եւ համապատասխան լուծումներ են տրվում սպառողներից ստացված հարցադրումներին եւ բողոքներին:

Սպառողների կողմից բարձրացված այն հարցերի կապակցությամբ, որոնց լուծումը պահանջում է փոփոխություններ կատարել այլ գերատեսչական նորմատիվ-իրավական ակտերում, համապատասխան առաջարկություններ են ներկայացվել ՀՀ կառավարություն:

#### **7. Հանագործակցությունը զանգվածային լրատվամիջոցների եւ հասարակական կազմակերպությունների հետ**

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովն ապահովել է իր գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը:

Չանգվածային լրատվամիջոցներով պարբերաբար տեղեկատվություն է տրվել հանձնաժողովի ընդունած որոշումների, հասարակության համար կարելիություններ կայացնող խնդիրների վերաբերյալ:

Հանձնաժողովի անդամները հանդես են եկել մամուլում, ռադիոյով եւ հեռուստատեսությամբ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կամ նրանց հրավերներով անց են կացվել խորհրդակցություններ, համատեղ քննարկումներ, ինչպես օրինակ, Հայաստանի սպառողների միության եւ միջկուսակցական սոցիալ-տնտեսական հանձնաժողովի հետ, մամուլի ասուլիսներ, ձեպագրույցներ, որոնց ընթացքում սպառիչ պարզաբանումներ են տրվել հանձնաժողովի գործունեությանն առնչվող բոլոր հարցերին: Մասնավորապես, լայնորեն լուսաբանվել են 1999 թվականի հոկտեմբերի 1-ից գիշերային սակագնի ներդրման վերաբերյալ որոշումը, ինչպես նաեւ արելեյան, կենտրոնական Եվրոպայի եւ ԱՊՀ

երկրների կարգավորող հանձնաժողովների համագործակցության շրջանակներում հոկտեմբեր ամսին Երեւանում անցկացված համաժողովը:

Հանձնաժողովի նիստերը անցկացվել են դռնբաց շահագրգիռ կողմերի, պետական, հասարակական կազմակերպությունների, լրատվական միջոցների եւ հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությամբ:

### **8. Համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ**

Էներգետիկայի բնագավառում իրականացվող կառուցվածքային բարեփոխումներին աջակցման, ներդրումների խթանման, կարգավորման նորմատիվ իրավական դաշտի հստակեցման եւ զարգացման, կարգավորման ոլորտի մասնագետների պատրաստման նպատակով ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը համագործակցել է բանակցություններ է վարել մի շարք միջազգային կազմակերպությունների, առանձին մասնավոր ընկերությունների հետ, մասնակցել է կարգավորման խնդիրներին վերաբերող մի շարք միջազգային հավաքների (համաժողովներ, սեմինարներ եւ այլն) աշխատանքներին, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված ուսումնական ծրագրերին:

Մասնավորապես, ԱՄՆ -ի միջազգային զարգացման գործակալության (USAID) կողմից ՀՀ էներգետիկայի հանձնաժողովին ցուցաբերվող տեխնիկական օգնության շրջանակներում, ԱՄՆ -ի «Hagler-Bailey» խորհրդատվական ընկերությունը ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի մասնակցությամբ մշակել է քննարկման է ներկայացրել էներգետիկայի բնագավառի բարեփոխումների ծրագրի, էներգետիկական շուկայի ստեղծման եւ զարգացման հայեցակարգի, էլեկտրական էներգիայի եւ բնական գազի ոլորտներում սակագների, այդ թվում՝ մատուցվող ծառայությունների, հաշվարկման մեթոդաբանության եւ այլ փաստաթղթերի նախագծերը: Իսկ ԱՄՆ -ի էներգետիկայի ընկերակցության (USEA) կողմից կազմակերպվել են ԱՄՆ -ի

Քենտուկի նահանգի հասարակական ծառայությունների կարգավորման

փորձի լայնածավալ ուսումնասիրություններ, այդ թվում՝ երկու հանձնաժողովների փոխայցելությունների միջոցով:

1999 թվականին աշխատանքներ են տարվել արելեյան, կենտրոնական Եվրոպայի եւ Եվրասիայի երկրների կարգավորող մարմինների համագործակցության տարածաշրջանային ծրագրերի շրջանակներում: ԱՄՆ -ի միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ ԱՄՆ -ի կարգավորող հանձնաժողովների ընկերակցությունը (NARUC) կազմակերպել է նշված երկրների կարգավորող մարմինների միջեւ փորձի եւ տեղեկատվության փոխանակում, այդ թվում նաեւ՝ պարբերաբար կազմակերպվող համաժողովների միջոցով: Համագործակցությունն ավելի արդյունավետ հիմքերի վրա դնելու նպատակով ստեղծվել է գործում են արելեյան, կենտրոնական Եվրոպայի եւ Եվրասիայի երկրների կարգավորող մարմինների հիմնադիր, լիցենզիոն եւ սակագնային կոմիտեներ: Դրանց ընթացիկ գործունեությանը լիարժեքորեն մասնակցում է ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը, որի նախագահը ղեկավարում է նշված սակագնային կոմիտեն:

Կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային համագործակցության ծրագրերով 1999 թվականին հանաժողովներ են տեղի ունեցել Լիտվայում եւ Հայաստանում:

Արելեյան, կենտրոնական Եվրոպայի եւ Եվրասիայի երկրների կարգավորող մարմինների համագործակցության նոր փուլ կարելի է համարել 1999 թվականին նրանց ընկերակցության ստեղծման գործընթացը: Ընկերակցության ստեղծման և նրա հետագա գործունեության վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները, որոնք արժանացան ՀՀ կառավարության և ՀՀ արտաքին գործերի նախարարության հավանությանը, հնարավորություն ընձեռեցին ՀՀ էներգետիկայի հանձնաժողովին, նշված տարածաշրջանների այլ երկրների կարգավորող մարմինների հետ համատեղ, 1999 թվականի դեկտեմբեր ամսին Բուդապեշտ քաղաքում ստորագրել արելեյան,

կենտրոնական Եվրոպայի եւ Եվրասիայի երկրների կարգավորող մարմինների ընկերակցության ստեղծման մտադրության վերաբերյալ պաշտոնական փաստաթուղթ:

ԱՄՆ -ի միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ ԱՄՆ -ի կրթության զարգացման ակադեմիան (AED) ԱՄՆ-ում եւ մեր հանրապետությունում սեմինարների եւ դասախոսությունների միջոցով իրականացրել է մի շարք ուսումնական ծրագրեր, որոնց մասնակցել են ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի աշխատակիցները:

Իր իրավասությունների շրջանակներում ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը բանակցել է միջազգային խորհրդատու կազմակերպությունների եւ հնարավոր ներդրողների հետ, որոնց ընթացքում ներկայացրել է հանձնաժողովի հիմնավոր տեսակետները բնագավառում իրականացվող մասնավորեցման առանձին խնդիրների, ինչպես նաեւ էլեկտրական էներգիայի արտադրության նոր հզորությունների կառուցման պայմանների եւ բնագավառի այլ հիմնահարցերի վերաբերյալ:

### 9. ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի գործունեության ֆինանսական հաշվետվությունը

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը 1999 թվականին ֆինանսավորվել է ՀՀ պետբյուջեի միջոցներից:

Ստորեւ ներկայացվում են ՀՀ պետբյուջեից հատկացված միջոցների ծախսերն ըստ հոդվածների.

Դ	Հոդվածի համարը	Ծախսի անվանումը	Հաստատված բյուջե (հազ.դրամ)	Ճշտված բյուջե (հազ.դրամ)	Ֆինանսավորում (հազ.դրամ)	Փաստացի ծախս (հազ.դրամ)
1	01	Աշխատավարձ	46035.6	46035.6	45918.1	46035.5
2	02	Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	12890.0	12890.0	7082.3	8049.5
3	03	Գրասենյակային ապրանքներ եւ նյութեր	2368.0	1576.3	1000	995.9

4	04	Գործուղումներ, ծառայողական ուղեւորություններ	6600.0	1740.0	1700.0	1700.0
5	05	Կապի ծառայությունների վճար	3463.7	3463.7	2454.8	3192.8
6	06	Էլեկտրաէներգիայի, վառելիքի եւ ջեռուցման ծախսեր	1650.0	1650.0	864.4	1325.8
7	11	Ջրնուղ կոյուղուց օգտվելու վարձ	60.0	60.0	36.0	50.4
8	12	Գույք եւ սարքավորումներ	500.0	4200.0	3700.0	3700.0
9	13	Տրանսպորտի ծառայությունների վճար	6080.0	3980.0	3880.0	4744.4 *)
10	17	Ներկայացուցչական ծախսեր	350.0	350.0	50.0	50.0
11	22	Այլ ծառայությունների ծեռքբերման ծախսեր	5000.0	1500.0		
12	29	Շինությունների եւ սարքավորումների վարձակալության ծախսեր	10680.0	11040.0	8010.0	11040.0
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>			<b>95677.3</b>	<b>88485.6</b>	<b>74695.6</b>	<b>80884.3 **)</b>

Ծանոթություն.

\*) 1998 թ. դեբիտորական պարտքը՝ 564.0 հազ.դրամ

\*) 1999 թ. դեբիտորական պարտքը՝ 45.5 հազ.դրամ

\*\*\*) 1999 թ. պետական բյուջեի պարտքը՝ 5670.2 հազ.դրամ